

ՍԱՄՎԵԼ ԽՈՒԳՈՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պարունության ամբիոնի ասիստենտ, քիմիական գիտությունների թեկնածու

ԴՊՐՈՑՈՒՄ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

Հողվածը նվիրված է դեռահասության ճգնաժամի շրջանում դպրոցական դաստիարակության հարցերի վերլուծությանը: Առաջարկվում է դաստիարակության հիմքում դնել դեռահասության ճգնաժամի տեսությունները: Դաստիարակության հիմնական մեթոդներից է համարվում սխառեմատիկ հոգեբանամանկավարժական թրեյնինգները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ դեռահասություն, դեռահասության ճգնաժամ, դեռահասության ճգնաժամի տեսություններ, դեռահասների դաստիարակություն, դաստիարակություն ճգնաժամային շրջաններում, դպրոցական դաստիարակություն, հոգեբանամանկավարժական թրեյնինգներ:

Դեռահասության տարիքը, ինչպես հայտնի է, ճգնաժամային է և այս հանգամանքը պետք է հիմք ընդունվի դեռահասների դաստիարակության մեթոդական հարցերը մշակելիս: Ցավոք, ժամանակակից հոգեբանությունը և մանկավարժությունը դեռևս չեն մշակել ճգնաժամային տարիքներում դաստիարակության տեսական և մեթոդական կոնկրետ համակարգեր[9], ինչի հետևանքով ենթադրվում է, որ կայուն և ճգնաժամային տարիքներում դաստիարակությունը նույ-

նը պիտի լինի: Մինչդեռ, ինչպես ցույց են տվել հետազոտությունները, դաստիարակությունն ահռելի ազդեցություն է ունենում ճգնաժամների ընթացքի վրա [1], իսկ այն հանգամանքը, որ կիսավայրենի ցեղերում, որոշակի ավանդույթների կիրառման շնորհիվ դեռահասության ճգնաժամն ընդհանրապես կարող է չդրսևորվել[7], վկայում է, որ ժամանակակից հասարակության մեջ դեռահասությունը ճգնաժամային ընթացք է ունենում, որովհետև այս տարիքի դաստիարակության տեսությունն ու պրակտիկան չեն արտացոլում դեռահասության ճգնաժամի իրական մարտահրավերները:

Ըստ մեզ, դեռահասության տարիքի դաստիարակության մեթոդական համակարգը մշակելիս, նախ և առաջ պետք է հիմնվել այս տարիքի ճգնաժամի տեսությունների վրա: Ստորև փորձենք համառոտ ներկայացնել դրանք:

Մի շարք հեղինակներ դեռահասության ճգնաժամը կապում են սեռական հասունացման հետ: Ըստ Շ.Բյուլերի, սեռական պահանջմունքը սկսում է հզոր ձևով ի հայտ գալ, ինչն էլ դեռահասի մեջ հուզական փոթորիկ է առաջ բերում, նրան դարձնում է կոնֆլիկտային, ագրեսիվ: Հոգեվերլուծության ներկայացուցիչ-

ները, նույնպես սեռական հասունացման, կենսաբանական փոփոխությունների հետ են կապում դեռահասության ճգնաժամը: Ըստ Աննա Ֆրոյդի՝ սեռական բնագոյի ինպուլսները տագնապ ու մեղքի զգացում են արթնացնում դեռահասի մեջ, իսկ նրա պաշտպանական մեխանիզմները հնարավորություն չեն տալիս մեղմել այդ զգացումները [10]: Ֆ. և Ռ.Թայսոնները հետևյալ կերպ են բնութագրում դեռահասության պրոբլեմները. «Հորմոններով խթանվող ինպուլսների ալիքի հետ միասին արթնանում են զարգացման ավելի վաղ փուլերի կոնֆլիկտները, որոնք խախտում են Գերես-ի և ես-ի, բնագոյների և պաշտպանությունների միջև լատենտ շրջանում ձեռք բերված հավասարակշռությունը՝ առաջ բերելով հոգեկան ակտիվության բուռն մղում: Սեռական և ագրեսիվ բնագոյների ճնշման ուժգնացման շնորհիվ արթնանում են նախաէդիպյան և էդիպյան նախկին ցանկությունները և դրանց հետ կապված կոնֆլիկտները» [8, էջ 79]:

Մի խումբ գիտնականներ դեռահասության ճգնաժամը կապում են ինքնագիտակցության, ես-համակարգի մեջ տեղի ունեցող վերակառուցումների հետ: Այսպես, Սթենլի Հոլն այս ճգնաժամն անվանում է «ինքնագիտակցության ճգնաժամ» [12]: Է.Շպրանգերի կարծիքով դեռահասության ճգնաժամը ես-ի արթնացման արդյունքն է [ըստ՝ 6]: Փ.Բլոսը դեռահասության ճգնաժամը պայմանավորում է անձի անհատականացման գործընթացով, իսկ Է.Էրիքսոնը՝ նույնականության շփոթով: Ըստ հեղինակի, «...Դեռահասության և վաղ պատանեկության շրջաններում... սեռական հասունացմամբ բարդացած ինտենսիվ ֆիզիկական աճի հետևանքով էգո-ի հիմքը հանդիսացող նույնականությունը և անընդհատությունը նորից կասկածի տակ են դրվում ...» [11, էջ 366], ինչի հետևանքով դեռահասի մեջ յուրահա-

տուկ շփոթ է առաջանում: Նույնականության ձևավորման արդյունքում ճգնաժամը բարեհաջող լուծում է ստանում, դեռահասն ընդունում է սեփական ես-ը, ինքնավստահ է դառնում: Ճգնաժամի բացասական հանգուցալուծման արդյունքում դերերի շփոթ ու ինքնակասկածներ են առաջանում [11]:

Դեռահասության տարիքի կապակցությամբ Լ.Վիգոտսկին նշում է. «Այն, ինչ ընդունված է անվանել անձնավորություն, ոչ այլ ինչ է, քան մարդու ինքնագիտակցությունը, որն ի հայտ է գալիս հենց այս շրջանում. մարդու նոր վարքը դառնում է վարք իր համար, մարդը գիտակցում է իրեն որպես հայտնի միասնություն: Սա անցումային տարիքի վերջնական արդյունքն ու կենտրոնական պահն է» [3, էջ 227]:

Ըստ Ս. Խուդոյանի, դեռահասության ճգնաժամը պայմանավորված է սեռային ինքնագիտակցության արթնացմամբ (դեռահասը սկսում է գիտակցել սեփական ես-ը, որպես կին/տղամարդ), ինչի արդյունքում ձևավորվում է սեռային ես-կոնցեպցիան, ինքնագնահատականը, դեռահասը ձգտում է ինքնահաստատվել, որպես կին/տղամարդ [9]:

Տեսությունների մյուս խումբը դեռահասության ճգնաժամը բացատրում է այս տարիքում ակտուալացած պահանջմունքների ֆրոստրացիայով: Այսպես, ըստ Լ. Բոժովիչի. «Դեռահասության ճգնաժամն, ի տարբերություն մյուս տարիքների ճգնաժամերի, ավելի սուր և ձգձգված բնույթ է կրում, քանի որ ֆիզիկական և մտավոր արագ զարգացման հետևանքով դեռահասի մեջ ի հայտ են գալիս մի շարք այնպիսի պահանջմունքներ, որոնք այդ տարիքի դպրոցականների ոչ բավարար սոցիալական զարգացման հետևանքով չեն կարող բավարարվել: Այսպիսով, այս ճգնաժամային շրջանում պահանջմունքների դեպրիվացիան շատ ավելի ուժեղ և դժ-

վար հաղթահարելի է, քանի որ դեռահասի ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման մեջ սինխրոնությունը բացակայում է» [2, էջ 229]: Արևմուտքում ճգնաժամը բացատրում են տարիքային խնդիրների լուծման դժվարություններով [7]: Այդ խնդիրներից առանձնացվում են հետևյալները. ա) սեփական արտաքինի ընդունումը և մարմնի արդյունավետ օգտագործումը, բ) կանացի և տղամարդկային դերերի յուրացումը, գ) երկու սեռի հասակակիցների հետ նոր, հասուն հարաբերությունների հաստատումը, դ) իուզական ոլորտում ծնողներից և այլ մեծերից անկախության հասնելը, ե) մասնագիտական կարիերային նախապատրաստվելը, զ) ամուսնությանը և ընտանեկան կյանքին նախապատրաստվելը, է) հասարակայնորեն պատասխանատու վարքի ձևավորումը, ը) արժեքների համակարգի և բարոյական գիտակցության ձևավորումը [7, էջ 147–148]:

Ժամանակակից մանկավարժությունը նշված տեսություններից առավելապես հաշվի է առնում սեռական հասունացմանը վերաբերող տեսությունները՝ խիստ կարևորելով այս տարիքում սեռական դաստիարակության հիմնախնդիրը [4, 5]: Մեծ տեղ է հատկացվում նաև բարոյական դաստիարակությանը, մեծերի հետ հարաբերությունների կառուցման խնդիրներին:

Ես–համակարգի վերակառուցումների, ֆրոստրացիոն և տարիքային խնդիրների տեսությունների վրա հիմնվող դաստիարակչական մոտեցումներին, ավելի քիչ ուշադրություն է դարձվում մանկավարժա–հոգեբանական գրականության մեջ, մինչդեռ այն հասարակություններում, որտեղ դեռահասության ճգնաժամը բացակայում է, հենց նշված հանգամանքների վրա է կառուցվում դաստիարակչական համակարգը: Այսպես՝ հատուկ ծիսակարգերով ամրակայվում է դեռահասի սեռային նույնա-

կանությունը, ինչն էապես նպաստում է սեռային ինքնագիտակցության ձևավորման գործընթացին, դրանով իսկ ճգնաժամը մեղմելուն: Մյուս կարևոր հանգամանքը դեռահասների տարիքային խնդիրների լուծման հմտությունների ուսուցումն է, ինչպես նաև սեռական կյանքի տարուի վերացումը դեռահասների համար: Վերջին հանգամանքն անշուշտ մեր հասարակության մեջ անընդունելի է, սակայն մյուսների առումով, ըստ մեզ, անհրաժեշտություն կա մշակել հատուկ դաստիարակչական համակարգ և ներդնել դպրոցում՝ հատուկ թրեյնինգների ձևով (գաղափարն առաջարկվել է Ս. Խուդոյանի կողմից): Մասնավորապես, հատուկ աշխատանքներ պիտի իրականացվեն դեռահասների մեջ ադեկվատ սեռային ես–կոնցեպցիա, ինքնագնահատական, տղամարդու/կնոջ կերպարների և դերերի վերաբերյալ պատկերացումների ձևավորման և տարիքային խնդիրների լուծման ուղիների, հնարների ուսուցման ուղղությամբ: Նման դաստիարակչական համակարգի մշակման համար տեսական հիմք կարող են հանդիսանալ դեռահասության ճգնաժամի Փ.Բլոսի, Ս.Խուդոյանի, ինչպես նաև տարիքային խնդիրների տեսությունները, իսկ մեթոդներից լավագույնը, թերևս մանկավարժա–հոգեբանական խմբային թրեյնինգներն են, որոնց արդյունավետությունը բազմիցս ապացուցվել է, իսկ դեռահասներն էլ հաճույքով են մասնակցում դրանց:

Մեր հետազոտությունների նախնական արդյունքները վկայում են, որ նշված մոտեցումը ոչ միայն մեղմում է դեռահասության ճգնաժամը, այլև արդյունավետ ազդեցություն է ունենում դեռահասների կողմից սեռա–դերային վարքի, միջանձնային հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորմանը:

Հորվաժի ներկայացման փարեթիվը՝ 09.01.14 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խուրդյան Ս. Ս., Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները և դեռահասության ճգնաժամը // Մանկավարժական միտք, 2005, № 2–3, էջ 163–173:
2. Божович Л.И. Проблемы формирования личности. Избр. Психол. Труды. Воронеж, КАП, 1995.– 352 с.
3. Выготский Л.С. Собрание сочинений. т. 4, М. «Педагогика», 1984.– 432 с.
4. Зайцев Г. К., Зайцев А. Г., Хаптанова Т.Г. Половое воспитание подростков: ценностное отношение к здоровью // Вопросы психологии. М., 2002.– № 3.– С. 33–40.
5. Исаева Д. Н., Каган В. Е. Половое воспитание и психогигиена пола у детей. Медицина, 1979. –183с.
6. Кон И.С. Психология ранней юности. М., «Просвещение», 1989.– 255 с.
7. Ремшмидт Х. Подростковый и юношеский возраст. М.: Мир, 1994.– 255 с.
8. Тайсон Ф., Тайсон Р. Психоаналитические теории развития. Екатеринбург: Деловая книга, 1998.– 528 с.
9. Худоян С. С. Онтогенетические перестройки самосознания и кризисы развития личности. Ер. Зангак–97, 2010.– 232 с.
10. Фрейд А. Психология Я и защитные механизмы. М.: Педагогика–Пресс, 1993.–144 с.
11. Эриксон Э. Детство и общество. Санкт–Петербург. Ленато, 1996.– 592 с.
12. Hall C. S. Adolescence: ItsPsychlogy and Its Relations to Physiology, Antropology, Sociology, Sex, Crime, Religion and Education. N.Y., V. 1, 2.1922.

МЕТОДИЧЕСКИЕ ВОПРОСЫ ВОСПИТАНИЯ ПОДРОСТКОВ В ШКОЛЕ В СВЕТЕ ТЕОРИЙ КРИЗИСА ЭТОГО ВОЗРАСТА

САМВЕЛ ХУДОЯН

Заведующий кафедрой развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета им. Хачатуря Абовяна, доктор психологических наук

ГАЯНЕ ГРИГОРЯН

Ассистент кафедры теории и истории психологии АГПУ им. Х. Абовяна

В статье анализируются вопросы школьного воспитания в период подросткового кризиса. Предлагается в основу воспитания ставить теории подросткового кризиса. Одним из основных методов воспитания считается психолого–педагогические систематические тренинги.

Дата представления статьи: 09.01.14 г.

METHODOLOGICAL ISSUES OF TEENAGERS' EDUCATION AT SCHOOL FROM THE VIEWPOINT OF THEORIES OF THIS AGE CRISIS

SAMVEL KHUDOYAN

Head of the Chair of Development and Applied Psychology Armenian State Pedagogical University after KhachaturAbovyan, Doctor of Psychology

GAYANE GRIGORYAN

Assistant of the Chair of Theory and History of Psychology at ASPU after Khachatur Abovyan, PhD in Chemistry

In the article the questions of school education during teenage crisis are analyzed. It is offered to put theories of teenage crisis in a basis of education. It is considered one of the basic methods of education in psycho–pedagogical regular trainings.

Article submission date 09.01.14